# Երևանի Օրհուս կենտրոնի 2013թվականի տարեկան ամփոփ հաշվետվություն

Սիլվա Այվազյան
Կենտրոնի համակարգող

OSCE Organization for Security and Co-operation in Europe Office in Yerevan

# 2013թ. Երևանի Օրհուս կենտրոնի կողմից իրականացված միջոցառումներն ըստ ուղղվածության

| | |
|---|---|
| ➢Հասարակական և կլոր սեղան քննարկումներ | 4 |
| ➢Հանրային լսումներ/աջակցություն, մասնակցություն/ | 3 |
| ➢ Գործնական աշխատանքներ և արձագանքներ | 5 |
| ➢Դասընթացներ, սեմինար-քննարկումներ | 11 |
| ➢Էկոկրթական միջոցառումներ | 9 |
| ➢Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ | 10 |
| ➢Այլ | |

# 2013թ. Օրհուս կենտրոնի կողմից իրականացված աշխատանքներ

Հարցումների միջոցով համալրվել է կենտրոնի տեղեկատվական բազան.՝ Երևան քաղաքի վարչական տարածքում շահագործվող հանքավայրերի, քաղաքի ջրային օբյեկտների, օդային ավազանի, թափոնների մասով:

**Օրհուս կենտրոնների նամականի**

Published on Thursday, 17 January 2013 22:52 | Hits: 969



▾ ԵՐԵՎԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ — Click to collapse

**24.07.2013** Հարցում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հայաստանի աղբավայրերի վերաբերյալ / **02.08.2013** Պատասխան

**24.07.2013** Հարցում Երևանի քաղաքապետարան Երևանի աղբավայրերի վերաբերյալ / **31.07.2013** Պատասխան

**23.07.2013** Հարցում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն քաղաքի վարչական տարածքում շահագործվող հանքավայրերի վերաբերյալ, լրացում / **29.07.2013** Պատասխան

**16.07.2013** Հարցում «Երևան ջուր» ՓԲԸ-ին Հրազդանի կիրճում գործող օբյեկտներ ունեցող իրավաբանական անձանց հետ ունեցած պայմանագրերի վերաբերյալ / **24.07.2013** Պատասխան

**12.07.2013** Հարցում Երևանի քաղաքապետարան Հրազդան գետը լցվող արտադրական և կոմունալ-կենցաղային հոսքաջրերի վերաբերյալ / **09.08.2013** Պատասխան

**03.07.2013** Հարցում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն քաղաքի վարչական տարածքում շահագործվող հանքավայրերի վերաբերյալ / Պատասխան

**03.05.2013** Հարցում ՀՀ աշխ. և սոց. հարցերի նախարարություն հանրապետությունում հաշմանդամների թվաքանակի վերաբերյալ՝ ըստ նոզոլոգիաների և տարիքային խմբերի/ **23.05.2013** Պատասխան. բեռնել այստեղից

# Օրհուս կենտրոնն իրականացնում է էկոլոգիական տեղեկատվության հավաքագրում և տարածում



# ԻՐԱԶԵԿՄԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ







Օրհուսի կոնվենցիայի լուսաբանում







*Բնապահպանական և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործման խնդիրները ՀՀ-ում*

*Խաղալիքների անվտանգության հարցերը ՀՀ-ում*

*Սնդիկի հիմնախնդիրները ՀՀ-ում*

## Օրհուս կենտրոնն իրազեկում է շահագրգիռ հանրությանը ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ, ներգրավելով նրանց այդ նախագծերի քննարկման գործընթացին



## 2013թ.-ի ընթացքում ՕԿ-ը շահագրգիռ հանրության շրջանում տեղեկատվություն է տարածել հետևյալ նախագծերի վերաբերյալ.

- Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագիծը և հանրային լսումների մասին տեղեկատվությունը(պարբերաբար)

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը հանրային քննարկումների մասին տեղեկատվությունը (պարբերաբար)

- «Գենետիկորեն ձևափոխած օրգանիզմների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և խորհրդարանական լսումների մասին հայտարարությունը (պարբերաբար)

- Օրհուսի կոնվենցիայի իրականացման 4-րդ Ազգային զեկույցի նախագիծը(պարբերաբար)

- <<Ընկերությունների  կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի փաթեթը

- Նախատեսվող գործունեությունների այն բոլոր նախագծերի և դրանց հանրային լսումների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարություն փորձաքննության՝ ներառյալ նախագծերը, եթե դրանք հասանելի են եղել ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում:

# Կլոր սեղան-քննարկումներ



*Մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակը Երևան քաղաքում*



*Օրհուսի կոնվենցիայի իրականացման 4-րդ Ազգային զեկույցի հանրային քննարկում*



«Նուբարաշենի աղբավայրից կենսագազի օգտահանման ու էլեկտրաէներգիա արտադրելու» նախագծի արդյունավետությանվերաբերյալ քննարկում



*Խաղալիքների անվտանգության հարցերի շուրջ քաղաքացիական հասարակության երկխոսություն*

# Համագործակցություն ՏԻՄ-ի հետ





- Երևանի քաղաքապետարանին կից Էկոլոգիական հանձնաժողովի նիստերի ընթացքում կենտրոնի համակարգողի կողմից Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությանը առաջարկություններ են ներկայացվել Հրազդանի կիրճի, Հրազդան գետի, Երևանյան լճի էկոլոգիական իրավիճակների բարելավման ուղղությամբ:
- Արձագանքելով բնակիչների ահազանգերին, կենտրոնը դիմել է Երևանի քաղաքապետարանին և համապատասխան վարչական շրջաններին մի շարք խնդիրների կապակցությամբ՝ Ավան-Առինջ թաղամասում կոյուղաջրերի արտահոսք, Երևանի Պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջի տարածքում կատարվող բարդիների «խորը էտում», ծառերի անօրինական էտման դեպքեր և այլն

# Էկոկրթական միջոցառումներ



*Երկրի օրը Երևանի Օրհուս կենտրոնում*



*Շրջակա միջավայրի պաշտպանության օրը Երևանի մանկական զբոսայգում*



*Սեմինարների շարք՝ Թափոնի արվեստ*

# 2013թ. արդյունքներ










*Անօրինական բենզալցակայան ապամոնտաժվեց*



# 2013թ. արդյունքներ

• Օրհուսի կոնվենցիայի լուսաբանման միջոցառումների արդյունքում թվով 105 մարդ իրազեկվել է Օրհուսի կոնվենցիայի և Կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքների մասին
•ՕԿ-ի կողմից ձեռնարկած գործողությունները, նպաստել են հանրության մասնակցությանը և ոլորտի մասնագետների ներգրավմանը որոշումների կայացման գործընթացին՝ հնարավորինս վաղ փուլերում, երբ դեռ հնարավոր է ազդել ընդունվող որոշման վրա
•Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների մասնագիտորեն հիմնավորված կարծիքները էական ազդեցություն են ունեցել ՀՀ բնապահպանության նախարարության՝ Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագծի վերաբերյալ ընդունվող որոշման վրա և նախագծին տրվել է բացասական եզրակացություն
•««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի վերաբերյալ ՀՀ Կառավարություն է ներկայացվել մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են համայնքներին հատկացվող բնապահպանական սուբվենցիաների ավելացմանը, դրանց նպատակային օգտագործմանը նպաստելուն, ինչպես նաև առաջարկվել է այդ վճարները հետագայում հասցնել 100 %-ի և հատկացումները կատարել բոլոր համայնքներին, այլ ոչ թե ընտրված, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բնական ռեսուրսները բոլորինն են:
•Կենտրոնի ահազանգի արդյունքում արագ կարգով վերացվել է Ավան-Առինջ թաղամասում կոյուղաջրերի արտահոսքը: Կենտրոնի արձագանքի արդյունքում՝ Միկոյան 14 շենքին հարակից տարածքի ծառերի անօրինական էտման դեպքի կապակցությամբ, ՀՀ բնապահպանության նախարության տեսուչների կողմից կազմել է արձանագրություն և անօրինական էտ կատարող հիմնարկը զգուշացվել է:
•2013թ. ձևավորվել է «Կանայք» քաղաքացիական նախաձեռնությունը, որի ակտիվ անդամ է նաև Կենտրոնի համակարգողը: Նախաձեռնության ձեռնարկած ուղղություններից մեկն է «Նուբարաշենի աղբավայրում կենսագազի օգտահանման ու էլեկտրաէներգիայի արտադրության» նախագծի իրականացման արդյունավետությանն առնչվող հարցերը: Այս խնդրի քննարկման վերջնական նապատակն է, որպեսզի նախագիծն իրականացվի ամբողջ ծավալով, այլ ոչ մասնակի, ինչպես հիմա է արվում, որը ոչ միայն էապես կնպաստի քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը, այլև նյութական օգուտներ կբերի: Այս և մի շարք այլ հարցեր «Կանայք» նախաձեռնության գործունեության առանցքային ուղղությունն են հանդիսանում, որոնք ի վերջո նպատակ ունեն բարձրացնել հանրային սեփականության պատկանելիության և կառավարման խնդիրները:

•Ապահովվել է կենտրոնի ամենօրյա աշխատանքները, կենտրոնի կողմից իրականացվել է 32 միջոցառում, որոնց մասնակցել են թվով՝678 մարդ, կենտրոնը հանդիսացել է ռեսուրս կենտրոն՝ հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվել են 413 մարդ, կենտրոնի տարածքը այլ կազմակերպությունների կողմից օգտագործվել է 18 անգամ:

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ